ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ ՄԵՆԱՄԱՐՏԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ ժողովրդական խաղերը և խաղային վարժությունները ժողովրդի պատմական կյանքի ու անցյալի բարդ իրադարձությունների ընդօրինակումներ են, որոնց մեջ երբեմն դրսևորվել են բնության դեմ մարդու պայքարի ձևերն ու եղանակները, ժողովրդի պատմական կյանքի անցուդարձերը, ազգային դաստիարակության ու կենսակերպի ձևերը և այն ամենը, ինչ կա, գոյություն ունի իրական կյանքում: Կանդրադառնանք ռազմամրցակցային խաղերին, հատկապես առանց զենքի մենամարտերին, որոնք ունեցել են լայն կիրառություն ողջ երկրում և հստակ պատկերացում են տալիս հայ ժողովրդի, հայ մարդու բնավորության, ուժի և այլ ունակությունների մասին, ինչպես նաև կքննենք այդ խաղերի բառահամակարգերի լեզվակառուցվածքային առանձին հիմնահարցեր:

Մենամարտերը ուժային վարժությունների բազմապիսի ձևերի ամբողջություն են: Տղաների մեջ այդ գործողությունների որոշ տարրերի կիրառումը սկսվում է շատ վաղ հասակից: Պարզ, սովորական մարզական վիճակից աստիճանաբար ընդլայնելով իրենց սահմանները՝ խաղ-վարժությունները ձեռք են բերել նորանոր նշանակություններ՝ հասարակական, ռազմական և անգամ պետական: Մարտախաղերն անհիշելի ժամանակներից ուղեկցել են մեր ժողովրդին, կրել զանազան փոփոխություններ, սակայն դուրս չեն եկել կենցաղից՝ պայմանավորված երիտասարդ սերնդի ֆիզիկական կոփման և ռազմական դաստիարակության կարևորագույն նկատառումներով: Գոյության ընթացքում հայ ժողովրդի կողմից երկրի պաշտպանության համար բազմաթիվ պատերազմներ մղելու հանգամանքն էական նշանակություն է ունեցել մենամարտի արվեստի կատարելագործման համար: Հնուց ի վեր Հայաստանում կիրառված առանց զենքի մենամարտերի առավել հայտնի ու տարածված տեսակներից են եղել ըմբշամարտը, բռնցքամարտը, խառնամարտը, ծանրամարտը, գազանամարտը (ցլամարտ) և այլն: Մենամարտերի բաղադրյալ այս անվանախմբում հիմքային արժեքն արտահայտվել է մարտ ընդհանուր անվա-

նակերտիչ բաղադրիչով, որը շատ անվանումներում փոխարինվել է **կոիվ** հոմանիշ և վերջիների հետ իմաստային մոտիկություն չունեցող **խաղ** բառերով և կազմվել տարահիմք հոմանիշներով զուգահեռ ձևեր՝ **ըմբշամարտ - ըմբշակոիվ - ըմբշախաղ, բոնցքամարտ - բոնցքակոիվ, խառնամարտ - խառնակոիվ, մենամարտ ~ մենակոիվ** և այլն: Սակայն մենամարտերի անվանահամակարգում հոմանշություն դրսևորող **մարտ, կոիվ, խաղ** բառերի փոխնիփոխ կիրառությունը ոչ բոլոր խաղերում է, որ չի հանգեցրել խաղատեսակի փոխվելուն, ինչպես՝ **գազանամարտը** մարդու պայքարն ու կոիվն է գազանի հետ կամ գազանի դեմ, իսկ **գազանակոիվը** նաև **գազանախաղը**՝ գազանների կոիվն ու խաղն իրար հետ: Թեև խաղերի հիմքում ընկած գործողության ընդհանուր գաղափարը հիմքակազմիչ բաղադրիչների փոփոխումից չի փոխվել, սակայն գործողների՝ **մարդ-գազան, գազան-գազան** փոփոխությունը հանգեցրել է խաղատեսակի փոխվելուն, խաղի մեկ այլ խմբի պատկանելուն: Նույնը կարելի է ասել նաև **բռունցք** և **խաղ** բառերի կապակցմամբ արտահայտված և **բոնցքամարտի** հետ որևէ կապ չունեցող մանկապատանեկան **բոնցքախաղի** **բռունցքներով խաղի** մասին:

Խաղ, կոիվ միավորներով կազմվել են նույն ոլորտի տարբեր ենթատեսակների պատկանող **գազանակոիվ, գազանախաղ, բոնցքախաղ** խաղանուները, իսկ **ծանրամարտ** անվան համար հիշյալ բաղադրող միավորները գործածական չեն ընդհանրապես:

Ներկայացնենք խաղերն առանձին - առանձին՝ ուշադրությունը բևեռելով բառերի և բառակապակցությունների արտահայտման ձևերին:

Ըմբշամարտ: Խաղ-վարժության վաղ գոյության, նշանավոր ըմբիշների և անգամ կին ըմբիշների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ: Հին հիշատակություններում հայտնի ըմբիշներն եղել են արքայական, իշխանական տոհմերից, և նրանց հաղթանակները, խաղաղ թե պատերազմական ժամանակներում, փառք ու պատիվ են բերել ողջ երկրին: Ռազմամարզական պատրաստություն անցած հայորդիներն անգերազանցելի մրցակիցներ են եղել սովորական խաղային մրցություններում, օլիմպիական հանդեսներում և ռազմադաշտում: Հնում շատ անգամ ըմբիշների մենամարտերով վերջ է դրվել արյունահեղություններին, կոտորածներին, երկրների միջև պատերազմներին, և նման իրողությունների արտացոլումները տեղ են գտել պատմական և գրական աղբյուրներում, ինչպես՝

Շապուհի փոխարեն Բաբիկ Սյունեցու մենամարտը Հոնագուրի[1], արաբ ծերունու խորհրդով Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի[2], ադրբեջանական հայոց հիների մենամարտերն արաբ փահլևանների հետ[3] և այլն:

Ըմբշամարտը սիրված խաղ-մրցություն է եղել և ինչ ասիթով էլ կազմակերպված լիներ՝ միջազգային հանդիպում, տոնախմբություն, հարսանեկան թե տղաների գյուղամիջյան պարզ հանդիպում, անց է կացվել մեծ հետաքրքրությամբ, գրեթե միշտ կռիվ եղանակի ներքո.

Զուռնաչին փչեց կռվի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան[4]:

Ըմբշամարտ տերմինը և նրա հետ կապված ըմբիշ, ըմբշական, ըմբշամարտություն, ըմբշամարտ կռիվ կամ ըմբշական մրցություն, ըմբշական մենամարտություն, ըմբշամրցություն, գիրկ ընդ գիրկ խառնիչ, գիրկ ընդ խառը կռիվ (մարտ), գոտեկռիվ, գոտեկռվություն[5], գոտեմարտել, գոտեմարտող, կշտի բռնել, ագռն[6], ասպարեզ, կռվանոց, հոլարան և այլ անվանումներ հայերենում գոյություն են ունեցել թե հնում, թե գրավոր շրջանի հենց սկզբից: Խաղի հայտնի և տարածված լինելու վկայությունն են նաև բնիկ և փոխառյալ բառերով արտահայտված այն բազմաթիվ հոմանիշ անվանատարբերակները, որոնցով անվանել են խաղը մեզանում՝ կռվ, կռվ բռնել (կեռապ, պրծնել), կյուրեշ, կշտուկի, մերկակռիվ, գոտեմարտ և այլն: Միայն մեր էպոսում, օրինակ, հայտնի են գյուլաշ (գուռաշ), գոմշանակ, խոյանակ, ծնկակուշտի, չոքակռիվ, չոքագյուլաշ, քոշտրա (կ), քոշտարի, ֆերզնակ տարբերակները: Նշված անվանումները հոմանիշ են համընդհանուր գործածական ըմբշամարտ տերմինին: Կան նաև անվանումներ, որոնք մենամարտում կիրառված այս կամ այն ձևի, հնարքի անունից են՝ դարձյալ հոմանիշ տարբերակներով, ինչպես՝ գիրկ ընդ գիրկ խառնվել - գիրկ ընդ խառը կռիվ, գիրկ ընդ խառը մարտ, գիրկ ընդ գիրկ խառնիչ, խտտակրի, ծնկամարտ - ծնկակ(ք)ուշտի, չոքակռիվ, բազկամարտ – բազկակռիվ, թևագյուլաշ, թևկի, գլխամարտ - գոմշակռիվ, գոմշա-

---

[1] Ստ.Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Եր., 1986, էջ 37:
[2] Սասնա ծռեր, հ.III, Եր., 1979, էջ 73:
[3] Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր, հ. II, Եր., 1980, էջ 65-70:
[4] Հ.Թումանյան,Ե.Ժ.հ. I, Եր.,1969, էջ 86:
[5] Տե՛ս Վ. Հացունի, Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 338- 339:
[6] Մ.Իսպիրյան, Վ. Առաքելյան, Մարզական հանրագիտարան, Եր., 2003, էջ 7:

նակ, խոյանակ և այլն: Լեզվի զարգացման տարբեր փուլերից ազգային և փոխառյալ տարբերակներով մեզ հասած համանիշ կամ զուգահեռ ձևերի անվանախմբում գործողությանը վերաբերող անվանումների տերմինային արժեքը պարզ է և ընկալելի, մինչդեռ նույն ըմբշամարտի ձևերն ու հնարքներն արտահայտող կանգնած նետել, պառկած նետել, բարձրից բերել, ծնկած նետել, գլուխ գրկելով, շեք մտնելով, վիզը ոլորել, կրծքից բռնել, քիթը բռնել, ձեռքը սեղմել բարդություններում տերմինային նշանակությունը գիտակցելի է միայն խաղի ժամանակ, որից դուրս դրանք սովորական, համագործածական արտահայտություններ են:

Ըմբշամարտ անվան նման բազմազանությունը ենթադրում է գործողություն կատարողների անունների բազմազանություն ևս՝ ըմբիշ, ըմբշամարտիկ ըմբշորդ, մերկամրցիկ ըմբիշ[7], գոտեմարտիկ (որ), ագռնարար, ագռնավար, քուշտնգիր, փահլևան, ֆերիզ, գուլաշչի և այլն: Տարբեր են եղել նաև մրցության կազմակերպիչների անունները՝ գուպարադիր, հանդիսադիր, հանդիսապետ, թափիչ, մարտադիր, մարտահարդար և այլն:

Խաղ-վարժության և դրան առնչվող հասկացությունների բառակազմական տարբեր դրսևորումներով անվանումները կարելի է դասել հետևյալ խմբերում.

1. մայրենի լեզվով և հայերենին հատուկ կառուցվածքով անուններ՝ կոխ, կոխի, գոտեմարտ, գոտեմարտող(իկ); գիրկ ընդ խառը կոիվ, գիրկ ընդ գիրկ խառնիչ, պտտումով գցում (ջրաղաց), խոյանակ, գոմշանակ, գլխամարտ, ոտքփաթուկ, ոտնդիր, խոզապառկուկի, նահատակ, բազկամարտ, հանդիսադիր, մարտադիր, մարտահարդար, հանդիսապետ, թափիչ(մրցության դատավոր և պարգևաբաշխ), կռվանոց, հուլարան, մարգարան և այլն.

2. օտար (փոխառյալ) անուններ՝ անվամբ և կառուցվածքով՝ ըմբիշ, փահլևան (պրս. pāhlevān - ուժեղ, հերոս, դյուցազն, քաջ, հարթանդամ մարդ), ֆերիզ (հսկա, կտրիճ, փահլևան, հզոր, զորեղ: Փահլևան և ֆերիզ (փերիզ) տերմինները նույնական են և հաճախ փոխարինել են միմյանց, երբեմն էլ գործածվել միասին՝ ֆերիզ-փահլևան:)[8], քուշտիբար, քուշտիգիր (պրս. kośti-gin - գոտեմարտիկ, ըմբիշ, հավանաբար քուշտի գիրիֆթան արտահայտության բաղադրիչներից կազմված, որը պարսկերենից թարգմանված

---

[7] Գ.Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 299:
[8] Սասնա ծռեր, Եր., 2008, էջ 556:

բառացի նշանակում է կոխ, կուշտի բռնել), քուշտի (պրս.koštі-գոտեմարտ, գոտեմարտություն, ըմբշամարտ), ագոն(հուն. agonia– մարտ, օլիմպիական խաղեր, մրցության հանդես), ագոնիստ (հուն. agonist - մրցող, ըմբշամարտող), չոքացյուլաշ, գյուլաշ, գյուլաշչի, կյուրեշ, քալբանդ, քոշտրա և այլն.

3. խառն անվանումներ արտահայտված հայերեն և օտար բաղադրիչներով՝ **ֆերզանակ, չոքակոիվ, թեանգյուլաշ, մերկամրցիկ ըմբիշ, ըմբշորդ, ըմբշամարտիկ (ռդ), ագոնավար, ագոնարար, քալակոիվ, ուջա բերել** (պտտումով զցում) և այլն:

Կենցաղում այլևս նախկին ակտիվ կիրառությունը չունեցող այս և շատ ուրիշ մենամարտական խաղեր աստիճանաբար մոռացվել են, իսկ ոլորտում կիրառված բազմաթիվ բառեր, տերմիններ (բևիկ թե փոխառյալ) դուրս են մնացել համագործածական ակտիվ բառաշերտից և դարձել հնաբանություններ:

Բռնցքամարտ: Հնում հայտնի և տարածված խաղատեսակներից մեկն էր **բազկամարտը** : Այժմյան բռունցքի իմաստն արտահայտող և հայերենի հին շրջաններում կիրառված **բուռն, մուրց, կռուփ** բառերով կազմվել են գործողության և գործողի հետևյալ անունները **բռնցքամարտ (իկ), կոփամարտ (իկ), մրցամարտ (մուրց և մարտ) (իկ)**: Խաղն ունեցել է նաև **բռնցքակոիվ, բռնամարտ, գոմփակոիվ, կոփահարություն, ձեռծեծոց, ձեռնամարտ, մուշտակոիվ** հոմանիշ անվանատարբերակները: Գործողություն կատարողների անվանախմբում մարտ բաղադրող հիմքին զուգահեռաբար կարող են ավելանալ **-իկ, -ող** ածանցները, իսկ **կոիվ** արմատական և **-ություն** ածանցային բաղադրիչներով կառույցներում՝ միայն **-ող** ածանցը, ինչպես՝ **կոփահարություն - կոփահարող, բռնցքակոիվ - բռնցքակովող, մուշտակոիվ - մուշտակովող**: Խաղի մարտ բաղադրիչով արտահայտված անվանաշարքում կիրառվել են նաև **-ություն** ածանցով արտահայտված **ձեռնամարտություն, բռնցքամարտություն, կոփամարտություն, մրցամարտություն** տարբերակները:

Ոլորտի բառահամակարգում բառակազմական ամենակենսունակ եղանակով՝ բառաբարդումով են արտահայտվել նաև **խառնամարտ** կամ **խառնակոիվ** և **գազանամարտ, ցլամարտ, առյուծամարտ** անվանումները:

Բռնցքամարտի և ըմբշամարտի տարրեր պարունակող **խառնամարտ, խառնակոիվ** կամ օտարահունչ **պանկրատիոն** անվանումներով չափազանց կոպիտ խաղաձևի մասին մանրամասնությունները խիստ սակավ են:

Հատ ու կենտ նկարագրությունների կարելի է հանդիպել Էպոսում: Քիչ են նաև խաղ-վարժության բառահամակարգում կիրառված անվանումները, տերմինները: Գործողություն կատարողների անուններ կազմող հոմանիշ -իկ, -ող ածանցներով կարող են արտահայտվել **խառնամարտիկ, խառնակռվող** անվանատարբերակները, որոնց չենք հանդիպել ուսումնասիրության ընթացքում: Ռազմարվեստի հետ ուղղակի կապ չունեցող, սակայն ֆիզիկական մեծ ուժ, ճարպկություն, հնարագիտություն, աչքաչափ, ճիշտ կողմնորոշվելու ունակություն պահանջող խաղ-պայքար էր **գազանամարտը**, որի վերաբերյալ բազմաթիվ հիշատակումներ տեղ են գտել գրավոր աղբյուրներում: Հիշենք Տրդատի, Վարազդատի[9], Սմբատ Բագրատունու[10] անօրինակ մրցությունները ամեհի գազանների հետ հունական և բյուզանդական ասպարեզներում, Էպոսում Մհերի և առյուծի գոտեմարտը, հեքիաթներում հերոսների մենամարտերը դևերի և այլ գազանների հետ:

Այս խաղի ուշ ժամանակների դրսևորում կարելի է համարել գյուղական երիտասարդների կողմից այծի, կովի, գոմեշի, եզի եղջյուրներից բռնած գետնին տապալելը: **Գազանամարտ** անվանումն ունեցել է նաև **ցլամարտ, կրկեսամարտ, առյուծամարտ,** իսկ գազանամարտիկը՝ **ցլամարտիկ, կրկեսամարտիկ, առյուծամարտիկ** տարբերակները:

Ծանրամարտ: Ծանրություն բարձրացնելու, կրելու, նետելու,շրջելու վարժությունները ևս վաղուց հայտնի են եղել հայ ժողովրդին, չնայած հիշատակումները վերաբերում են ավելի ուշ ժամանակներին: Ծանրություն հաղթահարելու գործողությունը Վ. Հացունին անվանել է **ծանրաբարձություն,** իսկ կատարողին **ծանրաբարձ**[11]: Ծանրություններ կրելու, հաղթահարելու բազմատեսակ գործողությունները հին ժամանակներում չափազանց կարևոր նշանակություն են ունեցել ժողովրդի կյանքում: Գրավոր աղբյուրներում տեղ են գտել հայտնի մարդկանց կողմից (Տրդատ[12], Կոմս Մամիկոնյան[13], Ս. Բագրատունի և ուրիշներ) գործողության կատարման բազմաթիվ օրինակներ, որոնք ռազմավարժության, խաղի կամ պարզ

---

[9] Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 222, 278:
[10] Սեբեոս, Պատմություն, Եր., 1939, էջ 57:
[11] Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 331:
[12] Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, Եր., 1983, էջ 431-432:
[13] Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1968, էջ 278:

գործողության դրսևորումներ են՝ իրական և անհավանական նկարագրություններով:

Ծանրամարտ, ծանրամարտություն անվանումներով ծանրաբարձության մեթոդյա մրցությունները կազմակերպվել են շատ ավելի ուշ, միայն 19-րդ դարի երկրորդ կեսից:

Գործողների –իկ, -ող, –որդ ածանցներով բաղադրված ծանրամարտիկ, ծանրամարտող, ծանրորդ անվանումները հավասարաչափ կիրառելի են ժամանակակից լեզվում և չունեն գործառական սահմանափակում:

Հոդվածում հիշատակված գործողությունների, կատարողների նույնանիշ և հոմանիշ անվանախմբերը կարելի է դասակարգել հետևյալ առանձնահատկություններով:

1. ա) Նույնանիշներ, որոնք չունեն իմաստային և կիրառական տարբերություններ, ինչպես՝ բոնցքամարտիկ - բոնցքամարտող, ծանրամարտիկ – ծանրամարտող -ծանրորդ, խառնամարտ -պանկրատիոն, ծնկամարտ - պարտեր և այլն: բ) Նույնանիշներ, որոնք դրսևորում են գործառական, ոճական տարբերություններ՝ բազկամարտ - բազկակռիվ, բռունցք - բռունմուրց – կռուի, խառնամարտ - խառնակռիվ, ծափկռիվ - յարդուշտա, մրցավար – հանդիսադիր - թափիչ և այլն:

2. ա) Հոմանիշներ, որոնք համագործածական և սահմանափակ գործածության բառեր ու բառակապակցություններ են՝ ցուլ, բռունցք, ձեռք, կռիվ, ծափ, գլուխ, ծանր, ծեծել, ձեռքը սեղմել, քիթը բռնել, կանգնած նետել, վիզը ոլորել և ծանրաբարձություն, ծանրաբարձ, զուտեմարտ (-ել, -ություն, -իկ, -ող), կրկեսամարտ (-իկ), գազանամարտ (-իկ), խառնակռիվ (մարտ), խոզապառկուկի, ըմբիշ, կռխ (-ի), խստակրի, կռվանոց, հոլարան, իրանի բռնվածք, ոլորումով հնարքներ, պտտումով զցում և այլն:

բ. Հոմանիշներ, որոնք ունեն կազմության միաբառ և բազմաբառ տարբերակներ՝ խստակրի - գիրկ ընդ խառը մարտ (կռիվ), կռխ - կռխ բռնել (կենալ, պրծնել), ըմբշամարտություն-ըմբշական մենամարտություն, ըմբշակռիվ- ըմբշամարտ կռիվ, ըմբշամրցություն – ըմբշական մրցություն և այլն:

գ. Հոմանիշներ, որոնք դրսևորում են իմաստաերանգային առանձնահատկություն՝ բոնցքամարտ – բոնցքակռիվ - ձեռծեծոց - գումիակռիվ գազանախաղ - գազանակռիվ, ըմբիշ – նահատակ (քաջ կռվող), ըմբշամարտ – ըմբշախաղ - ըմբշակռիվ և այլն: